Food and Agriculture Organization of the United Nations

ՊԳԿ-Ի

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՊԳԿ-Ի ՄԱՍԻՆ

Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ) ՄԱԿ-ի համակարգի խոշորագույն մասնագիտացված գործակալություններից մեկն է, որն առաջնորդում է սովի հաղթահարմանն ուղղված միջազգային ջանքերը: ՊԳԿ-ն հանդիսանում է գյուղատնտեսական, անտառային տնտեսության, ձկնատնտեսության և գյուղական զարգացման ուղղվածությամբ համաշխարհային հիմնական կազմակերպությունը: Հիմնադրվելով 1945 թ.-ին՝ ՊԳԿ-ն այսօր ունի 194 անդամ երկիր, երկու թղթակից անդամ երկիր և մեկ անդամ կազմակերպություն՝ Եվրոպական Միությունը: Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում ՊԳԿ-ն ընդհանուր առմամբ միավորում է 53 երկիր:

ՆՊԱՏԱԿԸ

ՊԳԿ-ի մանդատն է՝ բարձրացնել աշխարհի բնակչութ-յան՝ սննդով ապահովվածության մակարդակը, մեծաց-նել գյուղատնտեսական արտադրողականությունը, բարելավել գյուղական բնակչության կենսապայման-ները և նպաստել համաշխարհային տնտեսության զարգացմանը:

ՄԱՆԴԱՏԸ

Կազմակերպության նպատակն է հասնել պարենային ապահովության բոլորի համար և նպաստել, որ մարդկանց մշտապես հասանելի լինի բավարար քանակի և բարձր որակի սնունդ՝ ակտիվ և առողջ ապրելու համար: ՊԳԿ-ն հավատում է, որ յուրաքանչյուրը կարող է իր լուման ունենալ սովի հաղթահարման գործում:

ՊԳԿ-Ն ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետությունը ՊԳԿ-ին անդամակցել է 1993 թ.-ին, և կազամակերպության ներկայացուց-չության գրասենյակը Հայաստանում բացվել է 2004 թ.–ին: ՊԳԿ-ին անդամակցելուց հետո ՀՀ կառավարութ-յունը լայնամասշտաբ աջակցություն է ստացել ՊԳԿ-ի կողմից Հայաստանում զարգացման և արտակարգ օգնության ծրագրերի իրականացման գործում: Այս ծրագրերի նպատակն է նպաստել երկրում գյուղատնտե-սական գործնեության արդյունավետության բարձրացմանը և պարենային անվտանգության ապա-հովմանը:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՆՇԱՆԱԿԱԼԻՑ ԾՐԱԳՐԵՐԸ

- Աջակցություն ծիրանի կոլեկցիոն այգու հիմմանը՝ ծիրանի գենետիկ ռեսուրսների պահպանման նպատակով

Նպատակը. գենետիկ ռեսուրսների հավաքման և պահպանման միջոցով ծիրանի հուսալի արտադրության հիմքերի ամրապնդում, իսկ պտղի ու տնկանյութի ստեղծման համար՝ պիտանի տեսակների, արմատակալների ու համապատասխան տեխնոլոգիայի կիրառում:

- Հայաստանում խաղողի գենետիկական ռեսուրսների պահպանում և կայուն օգտագործում ծրագիր

Նպատակը. խաղողի արտադրության ոլորտի բարելավման և արդիականացման հիմքերի ստեղծման միջոցով նպաստել երկրում գյուղատնտեսության կայուն զարգացմանը՝ պարենային ապահովության, աշխատուժի հնարավորությունների օգտագործման և եկամուտների ստացման զգալի արդյունքով:

- Տեխնիկական աջակցություն խաղողի ֆիլոքսերադիմացկուն հավաստագրված տնկանյութի արտադրությանը

Նպատակը. աջակցություն Հայաստանի կառավարությանը՝երկրում գյուղատնտեսության կայուն զարգացման նոր մոտեցումների և գործիքների ներդրման հարցում, արտադրության և արտահանման հնարավոր աճի միջոցով հիմք ստեղծելով խաղողի արտադրության ոլորտի արդյունավետ կառավարման համար:

- Հայաստանում թունաքիմիկատների որակի վերահսկողության և դրանց մնացորդային քանակների մոնիտորինգի աջակցության ծրագիր

Նպատակը. բույսերի պաշտպանության միջոցների և դրանց մնացորդային քանակների արդյունավետ լաբորատոր վերահսկողության միջոցով նպաստել գյուղատնտեսական հատվածի կայուն զարգացմանը՝ հանգեցնելով գյուղատնտեսական պրակտիկայի և սննդամթերքի անվտանգության բարելավմանը, ինչպես նաև շրջակա միջավայրի մաքրությանը և թունաքիմիկատների օգտագործման հետ կապված ռիսկերի նվազեցմանը:

- Աջակցություն ծիրանի կոլեկցիոն այգու հիմմանը՝ ծիրանի գենետիկ ռեսուրսների պահպանման նպատակով

Նպատակը. գենետիկ ռեսուրսների հավաքման և պահպանման միջոցով ծիրանի հուսալի արտադրության հիմքերի ամրապնդում, իսկ պտղի ու տնկանյութի ստեղծման համար՝ պիտանի տեսակների, արմատակալների ու համապատասխան տեխնոլոգիայի կիրառում:

- Հայաստանում սպանդանոցների զարգացման աջակցության ծրագիր

Նպատակը. Հայաստանի մի քանի մարզերում մսամթերքի ապահով և հիգիենիկ արտադրության կազմակերպում, անասնաբուծությամբ զբաղվող հաստատություններին (ինչպես մասնավոր, այնպես էլ պետական) հնարավորության ընձեռում՝ արդյունավետ կերպով բարելավելու մսի և մսամթերքի անվտանգությունն ու որակը:

- Հայաստանում ջրային ռեսուրսների այլընտրանքային օգտագործումը ձկնաբուծության ոլորտում ծրագիր

Նպատակը. Նորագույն տեխնոլոգիաների ներդրման շնորհիվ՝ ապահովել Հայաստանի Արարատյան դաշտավայրում ստորգետնյա ջրային ռեսուրսների կայուն արդյունավետ օգտագործումը՝ պահպանելով արդյունագործական ձկնաբուծության արտադրության ծավալների աճը:

- «Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացման ծրագրի» շրջանակներում իրականացվող «Տեխնիկական օժանդակություն Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը» ծրագիր

Նպատակը. աջակցություն ՀՀ կառավարությանը՝ արդյունավետ և կայուն գյուղատնտեսություն ապահովելու գործում՝ նպաստելով գյուղական շրջաններում պայմանների բարելավմանը:

- Կովկասի և Կենտրոնական Ասիայի ընտրված երկրներում պարենային ապահովությանը և սնուցմանն ուղղված կարողությունների հզորացում

Նպատակը. պարենային ապահովության, սնուցման և բնակչության ամենախոցելի խմբերի սոցիալական պաշտպանության խթանման համար նպաստավոր միջավայր ձևավորելու կարողության հզորացում

- «Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկներում սննդի և գյուղատնտեսության ոլորտներում հակամանրէային դեղերի /ՀՄԴ/ նկատմամբ կայունության հակազդում» ծրագիր

Նպատակը. թիրախային երկրներում հակամանրէային դեղերի /ՀՄԴ/ նկատմամբ կայունության հակազդման տեխնիկական հնարավորությունների ընդլայնում և համապատասխան միջավայրի ապահովում:

«ՊԳԿ հրատապ օգնության ծրագիրը ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՊԳԿ շարունակական համագործակցության կարևոր բաղադրիչներից մեկն է, և մենք պետք է միասնական ուժերով աշխատենք, որպեսզի ֆերմերներին տրամադրվող աջակցությունը լինի ոչ միայն թափանցիկ ու թիրախավորված, այլև ցուցաբերվի ճիշտ ժամանակին»:

Արման Խոջոյան, ՀՀ էկոնոմիկայի փոխնախարար

- Պարենի կորուստների և թափոնների ծավալի կրճատման ռազմավարություն

Նպատակը. ծրագրի իրականացման վայրերում պարենի կորուստների և թափոնների ծավալի կրճատման խթանում, որը կնպաստի կլիմայի փոփոխության ազդեցության նվազմանն ուղղված ազգային ջանքերի իրականացմանը և արտադրության աճի համար սննդամթերքի ազգային համակարգերի վրա ճնշման մեղմմանը:

- Աջակցություն գյուղատնտեսության ոլորտի քաղաքականության մշակմանը

Նպատակը. գյուղատնտեսության, գյուղի զարգացման և հողատարածքների վերաբերյալ քաղաքականությունների մշակում և բարելավում, ինչպես նաև քաղաքականության իրականացմանն ուղղված մեթոդների վերաբերյալ առաջարկությունների կազմում և ներկայացում:

- Հողերի չօգտագործման խնդիրների կարգավորման նպատակով հողերի կառավարման գործիքակազմի և ինստիտուցիոնալ շրջանակի ձևավորում

Նպատակը. աջակցություն ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը լուծել հողերի չօգտագործման խնդիրը նոր իրավական և ինստիտուցիոնալ շրջանակի կազմավորման, ինչպես նաև հողերի կառավարման գործիքակազմի ձևավորման միջոցով, որը հատկապես ուղղորդված կլինի հողերի կոսոլիդացիայի, հողը բանկավորման և միջնորդավորված վարձակալությանը: Այդ նպատակով օրենքի նախագիծ և ուղեկցող փաստաթղթերի փաթեթ է մշակվել աջակցելու ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը օրենքի քննարկման և ընդունման համար:

- Հայաստանում անտառների դիմակայության բարձրացում՝ մեղմացման միջոցառումների շնորհիվ հարմարեցման և գյուղական վայրերում կանաչ տարածությունների ընդլայնման միջոցով

Նպատակը. ագրոանտառաբուծության ոլորտներում ներդրումների և կարողությունների զարգացման միջոցով ծրագիրը ջանքեր կգործադրի անտառային տարածքների ընդլայնման և ածխածնի քանակների նվազեցման ուղղությամբ՝ նվազեցնելով վառելափայտի պահանջարկը, նպաստելով անտառվերականգնմանը և անտառապատմանը, և, վերջապես, ներդնելով անտառների կայուն և կլիմային հարմարված կառավարման գործելակերպեր:

- Տեխնիկական աջակցություն անտառների ազգային քաղաքականության և ռազմավարական շրջանակի վերանայմանը

Նպատակը. նպաստել Հայաստանում գործող անտառների կայուն կառավարմանն ուղղված գործողությունների և նախագծերի զարգացմանը, Կառավարության առաջնահերթություններին համապատասխան, ինչպես նաև Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում ՊԳԿ- ի տարածաշրջանային նախաձեռնություններին և ՊԳԿ- ի ռազմավարական նպատակներին և կայուն զարգացման նպատակներին:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

- ՀՀ կառավարություն
- ՄԱԿ-ի այլ գործակալություններ
- Միջազգային այլ կազմակերպություններ
- Մասնավոր հատվածի տեղական և միջազգային գործընկերներ
- Հասարակական կազմակերպություններ

ԴՈՆՈՐՆԵՐԸ

- Ամերիկայի Միացյալ Նահանգներ
- Հունաստան
- Ռուսաստանի Դաշնություն
- Եվրամիություն
- Շվեյցարիա
- Ավստրիա
- Իտալիա

«Այժմ, ՊԳԿ-ի շնորհիվ, և վստահ եմ իմ ընտանիքի՝ հատկապես իմ թոռների ապագայի համար»:

Մերսելիդա Աթոյան, ՊԳԿ ծրագրի շահառու
Շիրակի մարզ, Մայիսյան գյուղ

ԱՄԵՆԱՇՈՇԱՓԵԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- թունաքիմիկատների որակի վերահսկողության լաբորատորիայի հիմնում
- թունաքիմիկատների մնացորդային քանակների լաբորատորիայի վերազինում
- ձկնաբուծարան՝ նորագույն տեխնոլոգիաներով հագեցած
- խաղողի տնկանյութի պատվաստի արտադրամաս
- հակակարկտային համակարգերով և ոռոգման առաջադեմ տեխնոլոգիաներով հագեցած ցուցադրական տնտեսություններ
- ծիրանի և խաղողի ցուցադրական այգիների հիմնում
- 1 հա ծիրանի կոլեկցիոն այգի՝ 83 սորտերով
- 1 հա խաղողի կոլեկցիոն այգի՝ 350 սորտերով
- 5 սպանդանոց
- 3 դպրոցական ջերմատուն
- դպրոցական ջերմատանը կից չրանոց
- 2 դպրոցական այգի
- բազմաթիվ մասնագիտական գրականության տպագրում
- գյուղատնտեսության առաջավոր փորձին նվիրված ուսուցողական նյութերի և ֆիլմերի պատրաստում
- աջակցություն գյուղատնտեսության համատարած հաշվառման իրականացմանը
- շահառուների կարողությունների շարունակական հզորացում

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱՐԵՎՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆԸ

- «Պարենի և գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների պահպանության և կայուն օգտագործման» և «Բույսերի պաշտպանության» ազգային ծրագրերի նախագծեր
- «Չօգտագործվող հողատարածքների և հողերի կոնսոլիդացիայի վերաբերյալ քաղաքականության վերանայման և առաջարկությունների տրամադրման» հայեցարկարգ
- «Գյուղատնտեսական նշանակության հողերի արդյունավետ օգտագործման ապահովման մասին» օրենքի նախագիծ
- «Հայաստանի Հանրապետության թվային գյուղատնտեսության 2021-2030 թթ ռազմավարության» նախագրծ
- «Հայաստանի Հանրապետության անտառային ոլորտի զարգացման քաղաքականություն և ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագիր» նախագրծ
- Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն
- Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության իրականացման միջոցառումների ծրագիր
- «Գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքի նախագիծ

ՊԳԿ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

- ՀՀ կառավարությունը՝ ի դեմս ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի, և այլն
- ֆերմեր՝ Հայաստանի բոլոր մարզերից
- գիտական և ուսումնական հաստատություններ

ԿԱՊԸ ՄԵԶ ՀԵՏ

Ռայմունդ Յելե,
ՊԳԿ ներկայացուցիչ Հայաստանում

Գայանե Նասոյան,
ՊԳԿ հայաստանյան ներկայացուցչի օգնական

FAO-AM@fao.org
www.fao.org/armenia

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն
Երևան, Հայաստան

Some rights reserved. This work is available under a CC BY-NC-SA 3.0 IGO licence

© FAO, 2021
CB5011HY/1/07.21

©FAO/Կարեն Մինասյան